1. Գեթսեման պարտեզն մտեք,
Դուք՝ դևեն փորձվածներ,
Ձեր Տիրոջ պայքարն տեսեք
Այն խիստ ահավոր գիշեր:
Իր ցավեն ետ մի՛ քաշվիք,
Որ աղոթք ընել սորվիք:

2. Մոտեցեք այն ատեանին,
Ուր փառաց Տերն կանարգվի,
Նայեցե՛ք Անոր վշտին՝
Ի՜նչ ցավով սիրտն կլեցվի,
Դուն ալ մի՛ քաշվիր ցավեն,
Խաչդ կրել սորվե Իրմե:

3. Գողգոթան ի վեր ելեք,
Հոն, Անոր ոտքերն գրկած,
Այս անհուն հրաշքն տեսեք,
Աստծո Որդին՝ զոհված:
«Կատարյալ է»,- կգոչե:
Սորվեցեք մեռնիլ Անկե:

4. Գերեզմանին մոտեցեք,
Ուր մարմինը թաղվեցավ,
Այն դատարկ է, նայեցե՛ք,
Ո՞վ զՏերն անկե առավ:
Տերն հարյավ ու համբարձավ,
Մեզ ալ նույն խոստմունք տվավ:

Նոտաներ